



ԹՕՓԱԼԵԱՆ ԴՊՐՈՑ ECOLE TOPALIAN

Fondation Hagop D.Topalian: Route de Troinex 64, CH-1256 Troinex (Genève)
ecole.topalian@centre-armenien-geneve.ch; www.centre-armenien-geneve.ch
Réalisation Maral Wurry

No. 42

ՆՈՐ ՄԵԿՆԱՐԿ. ՅՅՅ-Ի ՅԻՊՐԻԹ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ԹՕՓԱԼԵԱՆԻ ՄԵՉ

ՀԲԸՄ-ի Հայկական Համացանցային Համալսարանի եւ Ժընևի Թօփալեան վարժարանի համագործակցության շնորհիվ՝ հայկական առցանց կրթությունը հասանելի է նաև Թօփալեանի աշակերտներուն:

Վարժարանը հիմնուած է 1994-ին, բարերար Յակոբ Թօփալեանի ջանքերով: Անոր նպատակն էր պահպանել ազգային ինքնությունն ու մշակոյթը՝ սփիւռքի մէջ:

Նշենք, որ 1960-ականներուն, Թօփալեանի նախածնունդեամբ եւ հովանաւորութեամբ կառուցուած է Ս. Յակոբ եկեղեցին, Թրուանէի մէջ: Ապա, Իտալիայէն Ժընև տեղափոխուելէն ետք (1985), հաստատուած է հիմնադրամ մը, որուն շնորհիւ, Չուիցերիոյ մէջ հիմնուած է հայկական առաջին դպրոցը: Տարիներ ետք այդ դպրոցը, իր ուսումնական առաջին տարեշրջանը սկսած է 20 աշակերտով:

Այսօր, հաւատարիմ մնալով «Հայ Ապրիւն» կարգախօսին, դպրոցը իր 50 աշակերտներուն կը տրամադրէ հայկական կրթութիւն, դասաւանդելով հայոց լեցու եւ մշակոյթ: Դպրոցի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը ոչինչ կը ինչպէս բարձրորակ եւ արդիւնաւետ կրթութիւն ապահովելու, կիրառելով արդի մօտեցումներ:



ՀՀՀ-ի եւ վարժարանի միջեւ համագործակցութիւնը սկիզբ առաւ 2018-ին, ՀՀՀ-ի հիմնադիր եւ նախագահ Երուանդ Չօրեանի Ժընև կատարած այցելութենէն ետք: Ան կը նշէ. «Դպրոցին մէջ կը տիրէ դրական եւ ոգեւորող մթնոլորտ մը: Վստահ եմ, որ ՀՀՀ-ի առցանց դասընթացները եւ էլ. ուսուցման առաւելութիւնները նոր շունչ հաղորդեն դպրոցական ծրագիրին: Շնորհակալութիւն Թօփալեան դպրոցի աշխատակազմին եւ Պրն. Վահէ Կապրաշին՝ համագործակցութիւնը իրականացնելու համար»:

2019-ի Յունուարին դպրոցը միացաւ ՀՀՀ-ի հիպրիթ կրթութեան ծրագիրին, հետեւելով արեւմտահայերէնի առցանց դասընթացին: Դպրոցի ուսուցչուհի Մարալ Վուրին, որ մասնակցած էր ՀՀՀ-ի լեզուի դասընթացին, ստանձնեց աշակերտները դասաւանդելու պատասխանատուութիւնը:

Դպրոցի տնօրէնուհի Անի Մետրոպեան կ'ըսէ. «Կը յուսանք, որ ՀՀՀ-ի հետ համագործակցութիւնը արդիւնաւետ ըլլայ եւ յառաջիկայ տարիներուն Թօփալեանի բոլոր աշակերտները հետեւին այս հետաքրքրական դասընթացին»:

Համագործակցութեան ծիրէն ներս, 12 Դեկտեմբեր 2018-ին, դպրոցի աշակերտները մասնակցեցան ՀՀՀ-ի կազմակերպած առցանց ձեռնարկին, որ նուիրուած էր Կաղանդի ու Ս. Ծուռնոյի հայկական աւանդութիւններուն: Հանդիպումի ընթացքին աշակերտները հետաքրքրութեամբ հետեւեցան պատրաստուած տեսանկարին, երգեցին ու աշխուժօրէն մասնակցեցան խաղ-հանելուկներուն: Հանդիպումը skype-ով վարեց ՀՀՀ-ի հեռավար ուսուցչուհի՝ Չեփիւռ Խալիկեանը եւ հիպրիթ կրթութեան ծրագիրի պատասխանատու՝ Արփիմէ Թաւաթալեանը:



Թօփալեան վարժարանը իր մասնակցութիւնը բերաւ նաև Թումանեանի եւ Կոմիտասի ծննդեան 150-ամեակներուն նուիրուած ձեռնարկին, որ տեղի ունեցաւ 6 Մարտ 2019-ին, Բուն Բարեկենդանէն քանի մը օր ետք: Այդ իսկ պատճառով, աշակերտները մասնակցեցան համապատասխան տոնական զգեստներով: Հանդիպումի ընթացքին աշակերտները իրենց երգերով ու արտասանութիւններով հաճելի մթնոլորտ մը ստեղծեցին: Չեփիւռ Խալիկեանը հետաքրքրական տեղեկութիւններ յայտնեց Կոմիտասի ու Թումանեանի մասին, հեթիաթներ պատմեց ու տարբեր խաղեր կազմակերպեց: Աշակերտները հեռավար այցելեցին Թումանեանի ծննդավայրի՝ Դսեղի տուն-թանգարանը: Հետաքրքրական է, որ գեղեցիկ զուգահիւսութեամբ մը, մասնակիցներուն մէջ կը գտնուէր աշակերտներէն մէկուն մեծ մայրը, որ ծագումով դստեղի էր: Հանդիպումի աւարտին, ան ներկայացուց իր «Դսեղ»եան յուշերը:

Ուսուցչուհի Մարալ Վուրին, ամփոփելով իր տպաւորութիւնները ձեռնարկի մասին, հաստատեց. «Հանդիպումը շատ հետաքրքրական էր, գրաւիչ եւ ոգեւորող: Աշակերտները շատ ուրախ էին»: